

երիշկեց ծովի մէջ, տեսաւ մէկ ճոշ քեարքմ կայ ծալու պռուկ, մէկ սւտակ խապիւր էտ քեարից կը թալի, ճիւղն էլ ինոր չորս պիւլէօր պռնիր էր. էնա ցեղ որ մարթ առանց խալաւ խանելիւ չէր կեանայ էրթայ էտ յախալիւր ճիւր խմի. ինք ուր շորեր խանեց կնաց էտ յախալիւր ճիւր խմեց, էկաւ: Յետի յետի էկաւ ուր սարէն նստաւ:

13. Էտ վարթապետ խայի օրէնքի պէս ժամ կատէր, պատարաք կանէր, ախշկան ուրիւնթէն կը տէր: Տարին լմընցաւ, էտ ախշկայ փորը մեծացաւ: Ջուաք խասաւ ինոր կետրէր թակեաւորին, որ քիւ խարս տղով ա:

14. Թակեաւոր կնաց տիւան նստեց, կանչեց վեղրին, թէ. —Ձըս ասի, ըսկնա պան ի իլէ: Վեղրն էլ ասաց.—Թակեաւոր ապրած կենաս, տիւ վարթապետ կը տանիս քիւ խարսու կուշտ. տիւ չըս գիտի՞ վարթապետ էտա ցեղ պան կանի:

15. Թակեաւորն ասաց.—Վեղր, ապա ի՞նչ անենք:

Վեղիր ասաց.—Էրկուսն էլ սպանենք: Հրամայեցին Չալատին¹.—Կնա էրկուսի վիզն էլ կտրի: Չալատ կնաց սարէն, խարսի մօտ, ասաց.—Թակեաւոր հրաման արէ, ծէր վիզ ար կտրեմ:

16. Խարսը կասի.—Ծէր թակեաւորին տատաստան չը կ'այ, որ տղով կնկեան վիզ կտրել էրկու կաթի² ա. թակեաւորին ասա. տատրէք, մինչև ես իմ տղէն պերեմ, էն ժամանակ տեսնանք էրեխայ ա, ի՛նչ ա, թող իմ վիզ կտրեն. ինոնք էլ իմանան, թէ յըմ մեխկ ի՛նչ ա:

17. Չալաթ կնաց թակեաւորի մօտ, ասաց.—Թակեաւոր ապրած կենայ, ծէր խարս էտա ցեղ ասաց ընծի:

18. Վեղրներ ասին թակեաւորին.—Աղէկ ա ասէր, թոխ մնայ, ինոր տղէն պիրի, էն ժամանակ վիզ կը կտրենք:

Ժամանակ տվին, մինչև ինոր տղէն պիրի:

19. Ինոր ժամանակ լմնցաւ, տղէնը պիրեց: Երկու տղայ պիրեց, վարթապետ տղէներ կնքեց, մէկի անունը տրեց Սանասար, միւսին Բաղասար:

Խապար խասաւ թակեաւորին, որ քիւ խարս էրկու տղայ պիրեց:

20. Թակեաւոր ասաց.—Չալատին ասէք, թող էրթայ էնանց վիզ կտրի: Չալատ կնաց խարսի մօտ, ասաց.—Ծէր վիզը ար կտրեմ:

21. Խարս ասաց.—Ծէր թակեաւորին կանօն, նիզամ³ չը կայ, որ ծծօր տղէք ի՛նչպէս կը շախէն, որ յըմ վիզ կը կտրեն: